



ԽԱՅԻԿ ԴԱՉՍԵՆԸ

Ռանչպարների Կանչը

31

ՁԻՆ ՏՎԵՔ՝ ԹՈՂ ՀԵԾՆԻ

1919 թվականի մեծ պահքի կեսերին Անդրանիկը Գորիսից ճամփա ելավ դեպի Վայոց ձոր:

Համատարած ձյունը ծածկել էր Ջանգեզուրի բոլոր լեռնանցքները և չոր քամի էր փչում: Յոթ հոգի էր իր քարավանը, բոլորն էլ սպայակույտի անդամներ:

Առջևից ինքն էր գնում, ետևից՝ դատարկ թամբով մի երիվար և վեց ձիավոր: Եռաբլուրի մոտ ճանապարհը շեղվեց դեպի ձախ: Չորամասի մեծ մասը առաջացած էր մինչև Միսիանի Անգեղակոթ Գյուղը:

Ջանգեզուրի վերջին ամենաբարձր լեռնաշղթան կտրելիս սկսվեց մուլեզին ձնաբուք: Ձիանքը բնագորրեն էին առաջնորդում, որովհետև բքի սաստկությունից գետնին նայելու կարելիություն չկար:

Այդ միջոցին նկատելի դարձավ, որ քարավանի անդամներից մեկը խրվել է ձյունների մեջ և հետիոտն մաքառում է հեծյալներին հասնել: Նա մերթ երեսը ետ էր դարձնում քամու հարվածներից պաշտպանվելու, մերթ ձեռնափերով դեմքը ամուր փակած՝ գլուխը դեմ էր անում բքին և ոտքերը դժվարությամբ ձյունից հանելով, ճիգ էր անում վերջին հեծյալի հետքը չկորցնել:

Սպայակույտի անդամներից մեկը, որ Հաջի Գևորգի առջևից էր գնում՝ հարցրեց*

Ո՞վ է այդ թշվառը:

Չորավար Գիթունը:

Ինչու՞ է հետիոտն:

Անդրանիկը բարկացավ, ձին ձեռքից առավ, ստիպված ոտքով է մաքառում:

Բայց պատճառ՞որ:

Պատճառը Գորիսի հայ կանանց կարմիր դրոշակն է: Անգլիացին չէր ուզում այդպիսի մի դրոշակ տեսնել մեր գորամասի ձեռքին: Այդպես է, դեռևս Չապոդի ձորում նա կասկածով էր նայել հայ զորավարի վրանի առաջ ծածանվող կարմիր պաստառին:

Հասկանալի է փաշայի գայրույթը: Նա երեկվանից դեռ հանդարտված չէ: Հյուրանոցում իր բաժակաճառի ժամանակ նա այնքան վրդովված էր, որ ես սարսափով մտածում էի՝ չլինի՞ թե հանկարծ մի ապտակ իջեցնի դաշնակից զորավարի կուշտ ու կլորիկ դեմքին: Բարեբախտաբար այդ բանը տեղի չունեցավ: Սակայն մարդը տարիքոտ է, հարեց սպայակույտի անդամը: Դուք հին ընկերն եք փաշայի և հին ֆիդայի: Խնդրեք, որ նրա ձին վերադարձնի:

Հաջի Գևորգն ձին քշեց և բուրբ ճեղքելով զորավարին հասավ:

Փաշա՛:

Շա՛, հոնդաց քամին անդունդ գլորվելով:

Փաշա, նորից հնչեց Գևորգն, այս անգամ ավելի բարձրագոչ և ձիու բաշին թեքվելով, որ փոթորկին հաղթի:

Հոգնեցի՞ր, Գևորգ: Քո փոխարեն այժմ ձնաբուրն է լուր երգում: Քիչ էլ տոկա: Հայաստանի ո՞ր սարի բուրբ չի հարվածել հայդուկի կողերին: Տավրոսի՞ բուրբ ծանոթ չէ մեզ, թե՞ Ռահվե–Դուրանի կամ Բաղեշի լեռնակիրճի բորանը: Սա

Չանգեզուրի վերջին լեռնագագաթն է, շուտով կսկսի մեր էջքը դեպի Բագարշայ:

Փաշա, անգլիացին հոգնել է և դժվարությամբ է քայլում:

Ինչպե՞ս:

Ասում եմ, անգլիացին հոգնել է և դժվար է քայլում, իսկ բուքը սաստիկ է:

Ես նրան պատժել եմ: Նա ճանապարհին դարձյալ հակաճառեց ինձ և խորամանկ շեշտ կար նրա խոսքի մեջ մեր դատի հանդեպ: Մեր դրոշակի կարմիր գույնը իրեն դուր չի գալիս: Բացի այդ, ես տեսա, թե ինչպես նա ձիու հետ անխղճորեն էր վարվում: Է, ինչ անենք, որ նրանց նավերը և ավտոկառքերը չեն կարող մեր լեռները բարձրանալ: Մենք նրան ձի տվեցինք, որ խեղճ գրաստին ծեծի՝*: Թող մի քիչ ոտքով քայլի, որ հասկանա, թե ինչ բան է ազատության համար մարտնչող հայ զինվորի տառապանքը:

Բայց մեղք է, փաշա, կարող է խեղդվել բքի մեջ:

Իսկ մենք մեղք չե՞նք, նրա խոսքը ընդհատեց գորավարը: Իսկ Սեբաստացի Մուրադը մե՞ղք չէր, իսկ կոմիսար Շահումյանը մեղք չէ՞ր: Իսկ Շամխորում սպանված հարյուրավոր անմեղ ռուս զինվորները մեղք չէի՞ն: Իսկ մեր ժողովուրդը, որ կոտորվեց ու ցրիվ եղավ աշխարհով մեկ, մեղք չէ՞: Իսկ արաբը և չնդիկը մեղք չե՞ն: Քեզ մի բան ասեմ, Գևո, այն օրից, երբ մեր պատվիրակ Մոսե Իմոն ձեռնաթափ վերադարձավ Լոնդոնից, իմ հավատքը իսպառ խախտվել է Անգլիո վարիչների և նրանց զինվորականների հանդեպ:

Փաշա՛:

Թող մի քիչ քայլի:

Փաշա՛:

Իմ համբերանքն ես ուզում փորձել: Բուք կա իմ հոգում, չաջի, ավելի ահեղ, քան լեռնահայաստանի այս բորանը, որ կատաղորեն փչում է մեր դեմքին: Մեր ազգը կորել է փոթորիկի մեջ, իսկ դու ձի ես փնտրում ասեղ կտրող անգլիացու համար:

Լո՛ւ, լո՛ւ, լո՛ւ...

Ոչ մի լուր չի օգնի, իգուր է:

Սպիտակ ձիավորը գլուխը շուռ տվեց դեպի աջ: Ջորավարի կոշտ դիմագծերը ավելի պրկված էին: Գուցե վերջին անգամ էր նա անցնում այդ լեռներով: Նրա հայացքը այդ պահին ամբողջապես ուղղված էր Հայաստանից դուրս: Գաշնակիցների հանդեպ ունեցած կասկածը գնալով աճել էր իր մեջ, իսկ Հանրապետական Հայաստանի վարիչների հետ խրատորեն պատակտված էր: Երևանը թշնամաբար էր դիտում իր գորամասի անշատ գործողությունները: Այդ էր պատճառը, որ Գորիսի ազգային խորհուրդը համառորեն ձգձգում էր քառանիվ սայլերի վերանորոգումը: Չանգեգուրում դրանից մի տարի առաջ երևացել էին երեք զինվորական գործիչներ, որոնք խոստովանել էին, որ իրենք ուղարկված են «Անդրանիկին մեջտեղից վերացնելու»: Եվ արդեն լուրեր էին տարածվել, թե նա սպանված է:

Կաթինում դասալիք զինվորները իրեն «կոռ» անվանեցին, իսկ այստեղ՝ Անգեղակոթում, սասունցի հին հայդուկը գենք քաշեց իր վրա: Որքա՛ն էր սիրում նա Ախոյին: Երբ հավատարիմ սասունցին է զինվել իր դեմ՝ էլ ինչու մնալ: Պատակտում կար նաև իր և իր սպայակույտի որոշ անդամների միջև: Իրենից անդարձ բաժանվել էին սասունցիների գունդը, ձիավոր հարյուրակի հրամանատար Սարգիս Ճեպեճին, երրորդ գումարտակի պետ բժիշկ Բոնապարտը: Ջորամասի հրամանատարների և զինվորների մեծ մասը գորավար Մախլուտոյի գլխավորությամբ լքեց Չանգեգուրը և Սևանի արևելյան ափերը բարձրանալով գնաց դեպի Երևան յան հանրապետություն: Նույնիսկ իր սուրհանդակ Անդրեասը Թալինից չվերադարձավ Լոռի: Թիկունքից՝ բուք, առջևից՝ բուք, աղից ու ձախից էլ բուք: Բնությունն անգամ մոլեգնած էր իր դեմ: Այո, ինչու մնալ: Եվ նա որոշեց գնալ Էջմիածին, զենքերը հանձնել կաթողիկոսին և հեռանալ Հայաստանից:

Եղիշե՛, գոչեց նա:

Լսում եմ, գորավար:

Այն անգլիացին հոգնել է և կարող է խեղդվել բքի մեջ: Ջին տվեք թող հեծնի:

Քիչ վերջը գորավար Գիբոնը հեզ գառնուկ դարձած առաջանում էր քարավանի հետ:

Գարնան գաղջ արևը տաքացրել էր Արոտնա կիրճը, որի միջով հետևակն էր ընթանում, իսկ իրենք գնում էին բարձրով:

Շուտով երևաց Միսիանի վերջին գյուղը, և նրանց դիմաց ցցվեց գեղեցիկ իրանով մի սպիտակ լեռ: Բազարչայի հովիտն էր: Բայց մնում էր ամենադժվարին և ամայի անցուղին Բազարչայից մինչև Հերիեր: Այդ շրջանի ձյունը մարդու հասակից բարձր էր: Ձյունը փակել էր բոլոր ճանապարհները՝ դարափոսերը բլուրներին հավասարեցնելով:

Իրենք յոթ ձիավոր էին, մի անգլիացի գնդապետ և վեց սպայակույտի անդամներ: Առջևից դարձյալ ինքն էր գնում, ետևից՝ Հաջի Գևոն, քարտուղար Եղիշեն, անգլիացի գնդապետը և մյուսները:

Մերձակա մի գյուղ դիմավորելու ելավ աղուհացով:

Հապա էս բու՞քը, գոչեց Անդրանիկը բեղերի պաղուլույաները քանդելով, մեր առաջ աղուհաց հանելու փոխարեն ճամփաները մաքրեիք: Նա Բազարչայի մալականներին փող տվեց և նրանք խմբերով եկան մաքրեցին կուտակված ձյունը և գորքը անցավ: Հետևակը խճուղով գնաց, ձիավորները՝ սարով:

Կեչուտի ձորահովտում Հերիերի նոսր թփուտները իրենց միջից աղմուկով թափ էին տալիս ապրիլյան տաք ձյունը:

ԻՄ ՁԻԱՊԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ

Նոր-Բայազետում էի, երբ իմ ձիապան Բարսեղը հայտնըվեց: Ուրբից թեթև կաղում էր: Նա մի մեղավոր հայացք նետեց վրաս, վախենալով դատաստանից, բայց ես ավելի տրամադիր էի նրա քաջագործությունների մասին լսել, որովհետև վատահ էի, որ եթե նա ողջ է վերադարձել, ուրեմն իր խոսքը քաջության մասին է:

Չորավար, ասաց Բարսեղը դիմելով ինձ, երբ Անդբանիկի սուրհանդակ Անդրեասը հրավեր բերեց, որ մենք գնանք Լոռի, և դու ինձ կարգադրեցիր նրան ճանապարհ դնել, ես նկատեցի, որ Անդրեասը մտադիր է հարձակվել Իբրահիմ քսանի վրա: Եվ իսկապես, Դավթաշենի ձորում կռիվ եղավ նրա և Իբրահիմ խանի միջև և մեր սուրհանդակը նեղն ընկավ, Իր ձին խփվեց: Ես նրան վերցրի իմ թամբին և մենք՝ երկու հեծյալ մի թամբի վրա, հասանք Աշտարակ:

Աշտարակում Անդրեասն ասաց, «Բարսեղ, ես պիտի Ապարանով բարձրանամ Լոռի: Եկ քո ձին ինձ տուր, իսկ դու վերադարձիր գորավարիդ մոտ և ձեր գորքով շտապեք Քարախաչ: Խելքս մտավ և ձիս տվեցի նրան: Հագիվ էի ոտքս դրել ասպանդակին, երբ լսեցի, որ Բաշ–Ապարանում կռիվ է և Փեթարա Մանուկը Չոլոյի և Մորուքի հետ սասունցիներից մի խումբ կազմած շտապել է մասնակցելու Ապարանի ճակատամարտին:

Անդրեասը թե «Ես պետք է հասնեմ Անդրանիկ փաշի գորքին»: Ասաց, ու իմ ձին հեծնելով, գնաց դեպի Լոռի: Ես մնացի հետիոտն: Փեթարա Մանուկը ինձ մի ձի տվեց և մենք մի ամբողջ օր կռվեցինք Ալեքսանդրոպոլի կողմից Արագածի հյուսիս–արևելյան լանջով դեպի Երևան արշավող ռոմի գորքի դեմ: Կռվով հասանք Եղվարդի տակ:

Այդտեղ Չոլոն ասաց, որ թշնամին բազմահազար գորքով հասել է Արաքսի ափը և Էջմիածնի վրայով սպառնում է Երևանին: Թողեցի Բաշ Ապարանը և ինձ նետեցի Երևան:

Քաղաքի ծայրին մի ծերունի ժայռին փակված մի կոչ էր կարդում ուղղված Երևանի գորքերին և բնակիչներին, «Հայե՛ր, շտապեցեք հայրենիքն ազատելու... հասել է ըոպեն, երբ յուրաքանչյուր հայ, մոռանալով յուր անձնականը, պետք է գործ դնի իր վերջնական ճիգը թշնամուն հարվածելու համար: Հարկավոր է մի ճիգ ևս, և թշնամին վռնդված կլինի մեր երկրի սահմաններից:

«Հայե՛ր, ժամանակը չէ դանդաղելու: Հանուն մեր բազմաչարչար ժողովրդի ֆիզիկական գոյության: Ոտքի կանգնեցեք: Դեպի սրբազան պատերազմ: Դեպի գեներ բոլորդ: Դեպի Սարդարապատ»:

Ծերունին կարդալն ավարտեց և իր շուրջը հավաքվածներին կազմակերպելով, «ազատություն կամ մահ» գոռալով շարժվեց փողոցն ի վար: Գնալով այդ աշխարհագորը մեծացավ, խտացավ և փողոցը լցվեց հազարավոր մարդկանցով: Ես էլ ընկա այդ հեղեղի մեջ և շարժվեցի առաջ: Հասա քաղաքի կենտրոն և դեմ առա սև քարից շինված մի հսկա եկեղեցու: Գլխին հինգ սոխածն գմբեթ կար ծուռ խաչերով: Ինձ ասացին, թե դա ոսի ժամ է: Էս ժամի գանգերը լուռ էին: Աշխարհագորը շարժվեց դեպի Չանգվի կամուրջը, իսկ ես իմ ձիւն կապեցի ժամի դռանը և բարձրացա գանգակատուն: Հաշվեցի գանգերը. ութսուն հատ էին: Ամենամեծ գանգի լեզվակը իմ ձիւն գլխի շափ էր: Պարանը քաշեցի: Քաղաքը դրդաց ու ձայնը մինչև Եղվարդ հասավ: Եկեղեցու դիմացը մի աղբյուր կար: Տեսնեմ՝ մարդիկ էս աղբյուրի մոտ շարք կազմած կժերով ջուր են տալիս իրար: Շարանն անցնում էր իմ ոտքերի տակով և ձգվում էր մինչև կայարան:

Էս ի՞նչ բան է, հսկայի պես կռանալով հարցրի ես վերևից:

Ներքևից պատասխանեցին, թե ջուր են ուղարկում կովողներին: Կժերով հասցնում են կայարան և տակառների մեջ լցնելով գնացքով փոխադրում են Սարդարապատի դաշտ:

Ես գանգակատնից իջնելով արագությամբ շարք մտա և մի քանի կուժ ջուր փոխադրեցի հաշորդ ձեռքերին: Բայց իմ գործը ոչ ջուր փոխադրելն էր, ոչ էլ գանգեր հնչեցնելը: Ես ուզում էի և պետք է նետվեի կովի դաշտ:

Չե՞ծա իմ ձիւն և շտապեցի դեպի Արաքսի ափը: Թիկունքից սայլերով, ավանակներով, ձեռքերով ուզումս էի հասցնում կովողներին: Կես ճանապարհին մի թնդանոթ էր մնացել: Իմ ձիւն տվեցի, որ թնդանոթը շուտ տեղ հասցնեն:

Սկսեցի ոտքով քայլել:

Արաքսը վարարած էր: Դաշտի միջով դեպի Հայ–Չեյվա մի հեծյալ եպիսկոպոս էր գնում՝ պատկառելի վեղարը գրլխին և սուրը ձեռքին բարձր պահած: Ղարաբաղցի էր, անունը Գարեգին: Վտիտ և անշուք դեմքով մի այր էր սրբագանը: Տարիքը կլիներ քառասուն: Կողքից երեք երիտասարդ վարդապետ

Էին գնում՝ Եզնիկ, Դանիել, Թադևոս, խաչերը ձեռքներին բարձր պահած, իսկ ետևից գալիս էր տարօրինակ կրավորների մի բազմություն տարբեր զենքերով զինված, ոմանք շապիկ-վարտիքով, ոմանք՝ բոկոտն ու գլխաբաց:

Սրբազանը ձին կանգնեցրեց:

Միրելի ժողովուրդ, դարձավ նա բազմությանը: Արարատյան Հայաստանը հարվածի տակ է: Հայկական զորքերին հրամայված է դատարկել Սուրմալուն և նահանջել Կոտայքի բարձունքները: Շտապ առաջարկ է եղել Մայր աթոռը տեղափոխել Սևան: Կես ժամ առաջ վեհափառ հայրապետը հայտնեց, որ ինքը մերժում է կաթողիկոսարանը և Էջմիածնից տեղափոխել: Եթե հայ զորքը հրաժարվի կամ անգոր գտնվի պաշտպան կանգնել այս սուրբ վայրին, ասաց նա, ապա ինքը մենակ սուր կվերցնի և կովելով կրնկնի մայր տաճարի գավթում, բայց չի հեռանա և Էջմիածնից: Մինչև հիմա դուք էիք իմ աջը համ բուրում, ասաց վեհափառը զորքին և ժողովրդին դիմելով, հիմա ես եմ համբուրում ձեր ոտքը: Բոլորս դեպի թշնամին»:

Ի պատիվ և ի ուրախություն մեզ, Արարատյան դաշտի ամբողջ զորքը և ժողովուրդը զինված ջոկատներով անհավասար մարտի մեջ է մտել ոսոխի դեմ: Սուր է վերցրել և և Էջմիածինը: Ծառը արմատով է ծառ, տունը հիմամբ է տուն, գոչեց Գարեգին եպիսկոպոսը և բազմությունը նրա ետևից աղաղակեց. «Դեպի նոր Ավարայր»:

Արաքսի ափին հենց առաջին օրը ես գլորվեցի մի ավազափոսի մեջ, որտեղ մի վիրավոր էր ընկած՝ ճակատով դեպի գետին, ձիու սանձը թևի տակ ամուր սեղմած: Կռացա իմանալու, թե ով է, ու հանկարծ ծոծրակիս մի տաք բան զգացի: Շուտ եկա տեսնեմ՝ իմ ձին էր, որով ես գրոհել էի Թալինի բերդի վրա: Նա ետևից թեքված լիզում էր իմ վիզը, իսկ կողքի վիրավորը Անդրեասն էր: Անձանոթ տեսնողը նրա ահարկու կերպարանքից կարող էր տեղնուտեղը ուշագնաց լինել:

Անդրեաս, ասացի, դու էստե՞ղ, Սարդարապատի դաշտու՞մ: Չէ որ ես տեսա, թե դու ինչպես իմ ձին հեծնելով Եղվարդի վրայով գնացիր դեպի Լոռի:

Ես չէի ուզում Բաշ–Ապարանում կռվել, բայց ճանապարհին իմացա, որ Սարդարապատում կռիվ է, խոսեց Անդրեասը, նստելով ավագափոսի մեջ իմ կողքին: Ու՞ր կերթաս, Անդրեաս, չէ՞ որ Արաքսի ափին կռիվ է՝ ասացի ինքս ինձ: Երևանի կողմից եկող զանգերի գոռոցն էլ որ ականջս քանդեց, ասացի՝ Էստեղ մի լուրջ բան կա ու Հայաստանը շատ նեղ վիճակի մեջ է: Էլ դու ո՞ր օրվա համար ես, Անդրեա՛ս, ասացի ու ձիուս գլուխը շուտ տվեցի դեպի Սարդարապատ: Աջ թևի վրա կոռնետ Վանոյի հեծյալների դասակն էր: Չախ թևին շարված էին Վանի, Չեյթունի և Դալի Ղազարի ձիավոր դրնգերը: Միացա ալաշկերտցի Այվազի խմբին ու սլացա առաջ: Թե էս երկու օրվա մեջ ինչքան ասկյար եմ սպանել Շևրի փաշայի գործից՝ հաշիվ չկա: Իմ պակաս թողածը քո ձին վերջացրեց իր սմբակներով: Էս Սարդարապատը չէր լինի, եթե ժամանակին լավ պաշտպան ած լինեինք Էրզրումի, Բիթլիսի և Կարսի դռները, ավելացրեց Անդրեասը:

Անդրեաս մի ասա, մի կատարյալ արջ: Մեր խոսակցության ժամանակ չորս գինված ասկյար թփուտից դուրս նետվելով հարձակվեցին մեզ վրա: Նրանցից մեկը Անդրեասի ահռելի կերպարանքից տեղնուտեղը ուշաթափվեց, իսկ մյուս երեքին տասնոցը քաշելով գլորեց ավագների մեջ: Մեկ-երկուսին էլ ես ոչնչացրի գրոհելով եղեգների վրա, ուր նրանք խնամքով թաքնված էին դիակների տակ:

Ամբողջ օրը առավոտից երեկո թնդանոթները որոտում էին: Այդ նույն օրն էլ կռիվը վերջացավ մեր հաղթանակով: Արտաշատից մինչև Կարմրաշեն տասնյակ հազարավոր Շևրի դիակ էր դիզված:

Վերջին կռիվը եղավ մեծ Արտեն սարի վրա: Այնտեղ սպանվեց մահապարտների գնդի գումարտակի պետը: Ես անցա գումարտակի գլուխը և կազմակերպեցի նոր գրոհ: Մըշեցի Պանդուխտի ձիավոր գունդը Մաստարայի բարձունքից, իսկ մենք ներքևից հարձակվելով, այնպիսի մի շարդ տվինք, որ Շևրի թուրքերը լեղապատառ փախան մինչև Անի: Վանեցի Չհանգիր աղան էլ մեղ հետ էր իր եզիդական ձիավորներով, Առդա Մամիկոնյան Չորիկն էլ: Երկուսն էլ Պանդուխտի գումարտակի մեջ էին, 409 բարձունքում: Վերադարձա Արաքսի ափը: Հեռվից նկատեցի, որ սև ազոավներն ու անձեղները կռավելով ելնում իջնում էին այն փոսի վրա, ուր Անդրեասն էր պառկած: Վա՛յ, ասացի,

Անդրեասը սպանված է և ագռավները նրա լեշն են ուտում: Մոտեցա տեսնեմ՝
Անդրեասը իր ավագափոսում նստած տնքում է և նայում է, թե ինչպես գիշատիչ
հավքերը ծվատում են սպանված ասկյարներին: Կողքին էլ ամանով ջուր էր
դրված:

Անդրեաս, ասացի, դու վիրավոր ես, արի քեզ Երևան տանեմ:

Չէ, ասաց, ես Անդրանիկ փաշի սուրհանդակն եմ և նրա մոտ պիտի երթամ: Ինձ
կապիր ձիու թամբից ու բաց թող: Ձին ինձ ուղիղ Լոռի կտանի:

Անդրեաս, ասացի, դու իբրև սուրհանդակ մեզ մոտ եկար մայիսի յոթին, իսկ էսօր
մայիսի վերջն է, Անդրանիկը վաղուց Լոռին անցած կլինի:

Չէ, դու ինձ կապիր ձիու թամբին, փաշան ուր էլ լինի՝ ձին ինձ ուղիղ նրա մոտ
կտանի, պնդեց Անդրեասը:

Շատ որ գոռեց, խնդիրքը կատարեցի: Մի կերպ գրկեցի դրեցի թամբին և ամուր
կապեցի, որ վայր չընկնի: Դե, հիմա գնա հասիր Անդրանիկի գորքին, ասացի ու
սանձը տվեցի ձեռքը: Ձին մի քիչ տեղ գնաց, մեկ էլ ի՛նչ տեսնեմ. Անդրեասը վրա
էի կապերը քանդել է և ետ դարձած բռունցքը թափ է տալիս վերևով անցնող
ագռավների վրա: Երևանի կողմը չերթա՛ք, ձեր կտուցներից շան հոտ է գալիս:
Էս էն դաշտըն է, ուր Նոյ Նահապետը տապանից իջնելով խաղողի թուփ է
տնկել: Էդպես կշարդենք մեզ վրա եկողին:

Տեսա ընկնում է, վագեցի, որ կապեմ թամբին և բերդի հիվանդանոց տանեմ:

Ես հիվանդ չեմ, գոռաց վրաս: Ես պիտի անպայման հասնեմ փաշի գորքին, ու
ինքն իրեն մի կերպ թամբին ուղղելով, գլուխը դարձրեց դեպի Եղվարդի կողմը:
ուր տարավ նրան իմ ձին՝ չիմացա: Բայց որքան աչքս նշմարեց, ես նրան տեսա
դեպի վերևի սարերը գնալիս:

Այդ նույն օրը ես վիրավորվեցի ոտքից և ինձ տեղավորեցին Երևանի բերդի
գինվորական հիվանդանոցը: Բերդի մեջ մի բերդ էլ կար՝ անունը Շուշան:
Շուշանն ինձ ճանաչեց:

Ինչու՞, ասաց, գորավար Մախլուտոն ինձ Բիթլիսից ուղարկեց Երևան ու չեկավ իմ ետևից: Շուշանը գթության քույր էր բերդի հիվանդանոցում: Նրա խնամքին հանձնված էր նաև մանագլերոցի մի զինվոր, որ կովել էր Սարդարապատի դաշտում և ծանր վիրավորված էր:

Շուտով ինձ ու մանագլերոցի զինվորին դուրս գրեցին: Մենք Քանաքեռի վրայով գնացինք Եղվարդ: Եղվարդում լրսեցինք, որ Փեթարա Մանուկը և իր զինվորները ապստամբվել են Արարատյան Հանրապետության կառավարության դեմ: Նրանց միացել էին նաև մշեցի Պանդուխտի զինվորները, որ նոր էին վերադարձել ռազմաճակատից: Հարցրինք պատճառը, Մանուկն ասաց, թե Հայաստանի վարիչները զինադադար են կնքել Վեհիփի փաշայի հետ, նրան զիջելով մեր հողերի մեծ մասը և գորավար Անդրանիկին արտաքսելով հանրապետության սահմաններից:

Անդրանիկը արտաքսվա՞ծ: Ուրեմն մենք իզուր կովեցինք Սարդարապատում և Բաշ–Ապարանում, ասաց մանագ-

կերոցի զինվորը, և երկուսով բռնեցինք Նոր–Բայազետի ճամփան:

Լճաշեն գյուղում մանագլերոցի զինվորը մի գաղթական աղջիկ տեսավ, անունը Վարդանուշ էր: Ես երկու գեղեցկուհի եմ տեսել աշխարհում մեկը Շուշանն էր, մյուսը՝ Վարդանուշը: Մանագլերոցին զարկվեց Վարդանուշի սիրով ու մնաց Լճաշեն:

Բայց աշխարհը խաղաղ չէ ու ամենից վրդովվածը Հայաստանն է: Մեր սիրելու ժամանակը դեռ չի եկել, ասացի ես:

Աշխարհը սիրելով կխաղաղվի, Հայաստանն էլ հետը, պատասխանեց մանագլերոցին ու մենք բաժանվեցինք: Նա մնաց Լճաշեն գյուղում իր Վարդանուշի հետ, իսկ ես գնեքերս կապած շտապեցի Նոր–Բայազետ»:

Իմ ձիապանը ավարտեց իր պատմությունը և բեղերը ոլորելով նայեց ինձ:

Ես նրան, իհարկե, ներեցի, որովհետև նա մասնակցել էր Սարդարապատի ճակատամարտին:

ԽՌՈՎԱԾ ՀԱՅԴՈՒԿԱՊԵՏԸ

1919 թվականի գարնանը Անդրանիկն իր գործով Չանգեզուրի վերջին լեռնանցքի բուրք հաղթահարելով դիմեց դեպի Արարատյան դաշտ:

Դրոն Երևան յան նահանգի գորամասի հրամանատար էր նշանակված: Լուր հասավ Դրոյին, որ Անդրանիկի ձիավորներըն արդեն հասել են Արարատ կայարան, ուր հնդիկ և անգլիացի զինվորներ էին կանգնած: Դրոն հատուկ սալոն–վագոնով շտապեց Դավալու, որ նրան դիմավորի: Չորավարի պատվին Երևանում պատրաստված էր փառահեղ ընդունելություն և հաղթական մուտք: Երբ հասավ Ղ'ավալու, պարզվեց, որ Անդրանիկը այնտեղից արդեն մեկնել է: Հասավ Արտաշատ, բայց Անդրանիկը Արտաշատից արդեն դուրս էր եկել: Դրոն զգաց, որ Անդրանիկը խուսափում էր իրեն հանդիպել: Շարունակելով իր հետապնդումը, Երևանի գորամասի հրամանատարը նրան բռնեց Դավալայի այգիների շրջանում:

Դրոն բարձրից էր նայում Անդրանիկին, համարելով նրան ռազմական կրթությունից գուրկ մի սոսկական հայդուկապետ, պարտիզանական կռիվների մի հնուտ ղեկավար, որ ոչ մի մասնակցություն հանդես չէր բերել Սարդարապատի, Բաշ–Ապարանի և Ղարաքիլիսայի վերջին ահեղ ճակատամարտերին:

Ներքևում, հինավուրց կամուրջի տակով մոլեգնած հոսում էր գարնանային Հրազդանը: Դիմացը Մասիսներն էին, իսկ ետևում՝ Երևանը: Հանդիպումը եղավ գուսպ: Դրոն Անդրանիկին հրավիրեց մտնել Երևան:

Ես Երևան չեմ գար, ես դաշնակ կառավարությունը չեմ ճանչնար, կտրուկ պատասխանեց Անդրանիկը:

Հարվածող գորամասի քրտնաթոր նժույգները իրենց դարչնագույն մեզր խառնելով Հրազդանի պղտոր կոհակներին, վրնջալով անցան բերդի հին կամուրջով: Առջևից Անդրանիկն էր գնում, ետևից՝ գործը: Այգիների միջով դեպի Էջմիածին էր շարժվում մի անսովոր գորաբանակ:

Չորքը հոգնած էր: Հոգնած էր այն ոլորապտույտ խճուղին, որով նրանք անցնում էին: Հոգնած էր և այն փոշին, որ երիվարների սմբակների տակից բարձրանալով, անաղմուկ ոսկեղօծում էր երկնասլաց բարդիների նորականաչ կատարները:

Դրոն վաղուց հասել էր Էջմիածին և կայագորին կարգադրություն արել պատշաճ ընդունելություն ցույց տալ Անդրանիկին, համոզված, որ այնուամենայնիվ նա իր գորքը կըտանի դեպի Երևան և կողջունի Հայաստանի հանրապետության ծնունդը: Սակայն Էջմիածին հասնելով Անդրանիկն իր գորագունդը ուղղեց դեպի մայր տաճար: Ու՞ր էր գնում հայդուկապետը: Ինչու՞ էր նա դիմում դեպի հինավուրց վանքի դարպասները: Այս անսպասելի քայլը իրարանցման մեջ դրեց Էջմիածնի հայոց կայագորին, իրեն՝ Դրոյին և տեղի ողջ բնակչությանը:

Անդրանիկը դեպի Մայր տաճար է գնում: Ինչու՞: Ի՞նչ է պատահել, շփոթված հարցնում էին մարդիկ իրար: Հայոց կաթողիկոսը Գարեգին վարդապետի և մյուս եպիսկոպոսների ու վարդապետների հետ Տրդատա դռնով դիմավորելու ելավ մեծահամբավ գորավարին: Իրենք նույնպես արիաբար մասնակցել էին Սարդարապատի ճակատամարտին և իրավունք ունեին քաջին քաջորեն դիմավորելու:

Դարպասները բացվեցին, և գորքը ներս մտավ: Մտավ կապույտ ռազմիկը կապույտ նժույգին նստած: Մտավ անսովոր մի գորք, որի նմանը Էջմիածինը և Հայաստան աշխարհը մինչև այդ երբեք տեսած չկային, Այդպիսի գորք չէր եղել: Այդպիսի զինվորներ չէին անցել այդ ճանապարհով: Այդպիսի նժույգներ չէին դուփել Էջմիածնի սրբազան գետինը:

Բնակիչները, մեծ ու փոքր, վազում էին ճանապարհի երկայնքով և օդը կեցցեներով թնդացնում:

Ու ընկան դրոշները վանքի պատերի տակ Գևորգյան լճի ափին: Իրար վրա դիզվեցին հայդուկային կռիվների և կամավորական մարտերի՝ Դիլմանի, Բաղեշի, Կաբինի և Խոյի փառապանծ դրոշները: Փողփողալով վայր իջավ Չանգեգուրի հայ կանանց ծոպավոր կարմիր դրոշը: Ընկավ գեներն ու

հանդերձանքը: Եվ գորքին դիմելով՝ Անդրանիկն ասաց. Սիրելի զինվորներ, հասավ իմ և ձեր բաժանումի ժամը: Մեր մարտական կռիվները ավարտված են: Մեր զենքն ու դրոշները հանձնված են կաթողիկոսին: Բայց ձեզմե չբաժանված կուզեմ երկու խոսք ասել: Ես մեծ կրթություն չունեմ, շարունակեց գորավարը: Ես էլ ձեզ նման հասարակ ժողովրդի գավակ եմ, ձեզ նման մարտիկ ու զինվոր: Սիրուն ճատեր ասել չգիտեմ: Արդեն հիսունչորս տարեկան եմ, կարգված չեմ և ընտանիք էլ չունեմ: Կյանքի, գործի և պատվի ազատություն այս եղավ իմ և ձեր կյանքի նպատակը: Ես հայր չեղա ընտանեկան հարկի տակ, իմ ընտանեկան հարկը Հայաստանի երկինքը եղավ: Իմ մարտական կյանքը ես սկսեցի հայդուկությունից: Գնացի Սասուն, մտա մի մութ գոմ և սկսեցի զենքերի փշացած մասեր նորոգել: Գելիեգուզան գյուղին մոտիկ Ալոճագ (Տաղվրնիկ) կոչված գոմի մեջ պառկած կտառապեի հողացավով: Հիվանդությունն այնքան սաստիկ էր, որ օրը տասն անգամ մահս կուզեի: Վեց ամիս ոչ հանգիստ ունեի, ոչ էլ քուն: Մեկ կողմեն ցավը, մյուս կողմեն հալածանքները կնտահոգեին զիս: Տեղական բժշկական ամեն միջոց գործադրեցինք, բայց օգուտ չտվավ: «Աստված, Գաբրիել հրեշտակը դրկե. հոգիս առ, ազատվեմ այս տանջանքեն», ցավեն հուսահատ ասացի ես մի օր:

Սպաղանաց Մակարը, որ ութսունեն ավելի քաջատողջ մի ծերունի էր և քովս նստած չիբուխը կծխեր, աղերսանք լսելով դարձավ ինձ ու ըսավ.

«Անդրանիկ, լառ, Գաբրն ամեն անգամ, որ գլուխը դռնեն ներս կխոթե, որ հոգիդ առնե պատեն կախված հրացանդ տեսնելով, վախեն ներս չի գար, կփախչե կերթա»:

Վախեն, թե իմ չար բախտեն Գաբրն ներս չմտավ իսկապես: Այն զենքը, որից Գաբրն վախեցավ, ահա երեսունհինգ տարի է, ինչ իմ ձեռքեն վայր չի իջել: Իմ բմբլե բարձր Սասունի լեռները եղան: Իմ և ձեր կյանքն անցավ հայդուկային կռիվների և ազատագրական պատերազմների մրրիկների մեջ: Այգ հրացանը թևիս, ձիով և ոտքով ես ամբողջ Հայաստանը ձեզ հետ անցա ծայրեծայր: Այդքան տարվա մեջ ես չտեսա ոչ մի զինվոր, որ իր բնական մահով մեռներ: Դուք ձեր քաջությամբ և հերոսական գործերով բարձր պահեցիք մեր ժողովրդի արժանապատվությունը: Ոչ մեկ արարքով չարատավորեցիք ձեր սուրը: Մեծ

գոհված հերոսների հիշատակը:

Միրելի գինվորներ, մնաք բարով:

Ապա Անդրանիկը մի երկտող գրեց Հայաստանի կառավարությանը, ընդամենը երեք փութ գարի խնդրելով իր ձիու համար... կանխիկ վճարով:

Սևադեմ մի երիտասարդ, որ հենված էր «Ղազարապատ» հյուրանոցի պատին, հանկարծ վճռական շարժում կատարեց դեպի գորավարը: Շապինանդը շեշտակի նայեց նրա աչքերի մեջ և հասկացավ, թե վտանգը որտեղից էր գալիս: Չարագործը նույնպիսի անսպասելիությամբ գենքը ցած գցեց և հաղթահարված ծունկի իջավ հայդուկապետի առաջ: Ջինվորները ուզեցին նրա դատաստանը տեսնել, բայց Անդրանիկը սաստեց նրանց, և բարձրացնելով ընկածին ասաց,

Դու՛ գնա գարու ետևից: Այս թուղթը կտաս Դրոյի կառավարությանը և երեք փութ գարի կխնդրես իմ ձիու համար կանխիկ վճարով:

Երիտասարդը թուղթը վերցրեց և հյուրանոցի պատին քրավելով դանդաղ հեռանում էր, երբ գորավարը ձայնեց.

Հոս եկուր:

Սևադեմ մարդը ետ դարձավ:

Իմ ոչ մի հայդուկը գերեզման չունի լուսնի տակ: Տավորիկցի մի հին հայդուկ ունեի, որ սպանել է Մելիմ բեկին Գոլի կովում: Անունը Կիրո Օսման է: Վերջերս լուր ստացա, որ նա դավադրությամբ սպանվել է Վերին Արթիկում և թաղված է մի անանուն փոսի մեջ: Ես ուզում եմ, որ մի քար դրվի նրա վրա: Այդ մի հատիկ սասունցի գինվորս թող գերեզման ունենա աշխարհում: Այդ էլ հաղորդիք Դրոյին: Երեք փութ գարի և մի շիրմաքար: Չնոռանաս ասելիքը: Ի՞նչ պիտի հաղորդես:

Երեք փութ գարի և մի շիրմաքար Արթիկում գոհված հայդուկի համար, կրկնեց սևադեմ մարդը:

Աֆերին, տղաս, այժմ գնա գործիդ: